Լաուրա ԱԹԱՆԵՍՅԱՆ

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Արվեստը մշտագո հարց է,
որ տեսողական զգայություն է
տալիս աշխարհի մասին:[1]

Արդի գեղանկարչության առաջընթացի ուղիներն ու միտումները դեռ խիստ որոշակի չեն. վերջին հարյուրամյակի ընթացքում գեղանկարչության մեջ անընդհատ նոր փոփոխություններ են տեղի ունենում: Ճշմարտության աճող պահանջն այլևս չի կարող բավարարվել ձևով ու գույնով այնպես, ինչպես սրանք հասկացվում էին անցյալում. ամեն ինչ շարժման ու վազքի մեջ է, սրընթաց փոփոխվում է, և այս ընդհանուր դինամիզմը հենց այն է, ինչ արվեստագետը պիտի զորու լինի ներկայացնելու: Արվեստի հին լեզուն կարծես թե չի բավարարում մարդկային մտածողությանը: «Այսօրվա նկարիչը գործում է իր կտավի տարածության մեջ՝ քանդելով, տրոհելով մակերեսը, մինչև որ կհասնի իր ամբողջության իրականացմանը» - գրել է Արշիլ Գորկին:[2]

Անկասկած, այսօրվա նկարիչ է նաև Վալերի Խաչատրյանը: Վերջինս քաջ գիտակցում է, որ նկարելու գործընթացում անհրաժեշտ է ելնել բնությունից, իրականությունից, բայց և չպետք է կորցնել ազատորեն երևակայելու և արտահայտելու ունակությունը: Իր ստեղծագործական կյանքում Վ. Խաչատրյանը որոնում է գեղարվեստական նոր միջոցներ իրականության ճշմարտացի վերապատկերման համար: Ընդհանրացման մեծ ունակություններն ու գեղեցիկի գնահատման բարձր զգացումը նկարչին կյանքի խորունկ և սուր ընկալման հնարավորություն են ընձեռում: Ասել, թե ինչ է նկարում Խաչատրյանը, կլինի ենթադրություն. նրա պատկերներից շատերը ոչ թե կոնկրետ առարկաներ են, այլ՝ դրանց գունաբծային ակնարկները:

Վերացապաշտություն. երևի այս բառով կարելի է որակել նկարչի ստեղծագործական հայեցակարգը: Նրա կտավները ոչ, սյուժետային են, ազատ պատմողական կոնկրետությունից: Նկարիչը փորձում է իր ասելիքը արտահայտել միայն ձևերի և գույների անմիջական ազդեցությամբ: Անսյուժե գեղանկարչությունը հայտնի էր դեռ Վերածննդի շրջանից (Ջորջոնե), հետո այն զարգացրին իմպրեսիոնիստները, բայց նրանց գործերում բացակայում էր միայն սյուժեն, մինչդեռ Խաչատրյանի «գործող անձինք» գույներն են, նրանց կախարդական խաղը, հուզաթրթիռ տպավորությունը, որովհետև արվեստագետը նկարում է միայն շրջապատից ստացած տպավորությունը, իսկ տպավորությունը անցյութ է, հույզ է, սրտի թրթիռ, «պատկերային ազատագրում է»,[3] որ պատնեշներ չի ճանաչում:

Վ. Խաչատրյանն իր ստեղծագործական ճանապարհին, հայ նկարիչներից շատերի նման, ազդվեց տարբեր ուղղություններից: Այդ ազդեցությունները պատահական եղան ու մակերեսային: Մեր ժամանակների անընդհատ փոփոխվող գաղափարների քառսում դժվար էր մնալ հավատարիմ որևէ գաղափարի, բայց Վ.Խաչատրյանին հաջողվեց խուսափել օտարամուտ հոսանքներից և ստեղծել իր հոգեմտավոր աշխարհը:

Վ. Խաչատրյան նկարչի կայացումը համընկավ մեր իրականության շատ բարդ ու հակասական շրջանին՝ ահավոր երկրաշարժ, անկախություն, երբ փլվեցին

---

[1] *Դ. Մտրա, Կիրակնօրյա զբոսանք Գրանդ-Ժարում, Չիկագո, 1884:*
[2] *Ա. Պետրոսյան, Արշիլ Գորկի, Եր., 2004, էջ 16:*
[3] *Հ. Ռիդ, Արդի նկարչության համառոտ պատմություն, Եր., 2002:*

բոլոր խոշընդոտները, երբ արտերկրի հետ հաղորդակցումը դարձավ ավելի մատչելի, արվեստագետները շտապողականությամբ սկսեցին ընդօրինակել եվրոպական և ամերիկյան ավանգարդիստներին (Պոլոկ, Շագալ, Կանդինսկի, Արշիլ Գորկի, Մունկ, Կիրկիր...): Նրանց հանկարծակիի էր բերել անկախության պարգևած ազատությունն ու տեղեկատվական առատությունը: Այս խառնաշփոթի մեջ նրանցից շատերը կորցրին սեփական անհատականությունը, դարձան տեսածի վատ կրկնօրինակողներ: Եղան և այնպիսիք, որոնք ստեղծագործաբար յուրացրին տեսածը՝ չհեռանալով ազգային ակունքներից: Այդ գեղանկարչական հոսանքների հորձանուտում Վ. Խաչատրյանը չկորցրեց անհատականությունը և իր գեղանկարչական ու գրաֆիկական շարքերից լավագույնները ստեղծեց հենց այս տարիներին (1990-2000 ական թթ.): Շարքերից մեկը կոչվում է «Համարակալված ճակատագրեր». Երկրաշարժից փլված տների փոխարեն համարակալված փայտաշեն տնակներ, որ պատսպարել են խեղված ճակատագրերով մարդկանց: Նկարչին չէր կարող ցավ չպատճառել քաղաքի ավերակների ճչացող լռությունը, այդ ցավից էլ ծնվեց «Դոմիկներ», «Լվացք», «Ճիչ», «Համբացած քարեր» պատկերաշարքը: Իսկ «Ընթացք», «Տիրամայրեր» գրաֆիկական շարքերը լույսի ու հույսի, հոգու փրկության փնտրտուք էին: Հենց այս դժվար ու հակասական տարիներին էլ ձևավորվեց նկարչի գեղարվեստական կողմնորոշումը: Գուցե պարադոքս է, բայց էքստրեմալ պայմաններն են ծնում իսկական արվեստագետ:

Անժխտելի է Արշիլ Գորկու գեղանկարչության ազդեցությունը հայ նկարիչների վրա: Ժամանակակից հայ նկարչության վրա Ա. Գորկու թողած ազդեցության հիմքում նրա ստեղծագործության բարդ, ոչ միանշանակ ընկալումները, մեկնաբանություններն ու գնահատականներն են: Արշիլ Գորկու արվեստի հետ նկարիչների առնչությունների բնույթն ու հետևանքները պայմանավորված են բազմաթիվ գործոններով, առաջին հերթին՝ նրանց անցած ուղիով և անհատականորեն կայացած լինելու աստիճանով: Ա. Գորկուց ազդվել են դեռ 60-ականների նկարիչները (Մ.Ավետիսյան, Ա.Օշականց, Յու.Հարությունյան, Կ.Մկրտչյան), ու այդ գործընթացը այսօր էլ շարունակվում է: Վ. Խաչատրյանի «Ինչպես մորս ծաղկավոր գոգնոցը» նկարների շարքը ստեղծվել է Գորկու արվեստի անմիջական ազդեցությամբ: Նրան ոգեշնչել են Ա.Գորկու ֆիգուրաիվությունից զերծ հորինվածքների զգացականությունը, մտքի ու ժեստի ազատ խաղը: «Մայրս», «Ինչպես մորս ծաղկավոր գոգնոցը», «Հարսանիք», «Կթվորուհի կինը» գեղանկարչական պատկերները նկարչի անհատական մտածողության արգասիքն են՝ հարստացած գորկիական արտահայտչամիջոցներով:

Մեր օրերի նկարիչները փորձում են արտահայտել իրենց տեսակետն ու դիրքորոշումները նաև ոչ ավանդական ձևերի ու տեխնիկական նյութերի կիրառման կամ համադրման շնորհիվ, կամ դիմում են գեղարվեստական կերպարների սիմվոլային, այլաբանական մեկնաբանության:

Գեղարվեստական երկխոսության մի այդպիսի ինքնատիպ ձև է մինդարը: Սա նախշազարդ, գունագեղ կտորների խճանկարային համադրումով ստացված գեղարվեստական մտածողության դրսևորում է, որ հայ կանանց հայտնի է շատ վաղուց և լայն կիրառում ուներ մեր կենցաղում: Խաչատրյանի ստեղծագործության մեջ ևս մենք հանդիպում ենք մինդարների, սակայն նկարչի համար դրանք զուտ գեղարվեստական գունային մտածողություն չեն, այլ մանկության կարկատված հուշեր: Արշիլ Գորկու արվեստում նույնպես կարևոր տեղ ունի մինդարը, որ նրա համար թանկագին վերհուշ է սիրելի մոր ու անուրախ մանկության մասին:

Արվեստն այսօր էլ գեղարվեստական նոր ուղիների որոնման ճանապարհին է: Հետևաբար գեղանկարչությունն էլ մշտապես փոխում է իր լեզուն և արտահայտչամիջոցները: Իրականության և կտավի վրա նրա նկարագրի միջև գոյացող

հակասության յուրովի լուծման ուղիներ է փնտրում նաև Վ. Խաչատրյանը, և կասկած չկա, որ շնորհալի նկարիչը նոր ասելիք ունի գեղեցիկի արարման ճանապարհին:



ТВОРЧЕСКИЙ МИР В. ХАЧАТРЯНА

Л. Атанесян

Резюме

Устаревший язык искусства уже не соответствует мышлению современного человека - насущная потребность в истине не может быть удовлетворена посредством только формы и цвета.

Художник В.Хачатрян прекрасно осознает тенденции развития современного искусства. И, в этом смысле, он - сегодняшний.

Абстракция и иносказание – так можно охарактеризовать творческую концепцию художника. "Действующие лица" произведений Хачатряна-цвета, их магическая игра, впечатление, взволновавшее автора.

Известность Хачатряну принесли серии работ "Судьбы под номерами", и "Как цветастый передник моей матери...". Серия " Судьбы под номерами " была создана сразу после землетрясения и здесь художник отразил свое видение человеческой боли и скорби. В серии "Как цветастый передник моей матери..." просматривается некоторое влияние творчества Аршила Горького. Эта серия - плод индивидуального мышления, обогащенного "горьковскими" средствами выражения.

В. Хачатрян и сейчас продолжает свои искания в живописи, поскольку истинный художник всегда в пути - независимо от возраста и достижений.